«Հաստատում եմ»
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
տնօրեն՝ Ե. Սերոբյան
«09» նոյեմբեր 2020թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության

Նանե Արտակի Զեյնալյանի «Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում» խորագրով թեկնածուական ատենախոսության մասին՝՝ ներկայացված է ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ Հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

«Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում» թեմայով ատենախոսության արդիականությունը պայմանավորված է ներկա պայմաններում ընթացող հասարակական և քաղաքական տարբեր զարգացումներով, հայ-ադրբեջանական հակամարտության գործընթացներում ընթացող տեղեկատվական պայքարի, ժողովրդավարական գործընթացներով, որոնք հասարակությանը տևականորեն ենթարկում են տեղեկութահոգեբանական ներգործության: Այս տեսանկյունից էլ հիմնավորվում է անձի արժեհամակարգի բաղադրատարրերի դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրության և հասարակության պաշտպանությանն ուղղված գործնական առաջարկությունների մշակման անհրաժեշտությունը, որը հոգեբանական պատերազմի պայմաններում առավել հրատապ է, և բխում է հասարակական պրակտիկայի պահանջներից:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, որոշված է հետազոտության նպատակը, վարկածը, օբյեկտը, առարկան, առաջադրված են հետազոտության խնդիրները, որոնք բխում են հետազոտության նպատակից, ձևակերպված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ներկայացված են նաև հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, փուլերը, ընտրանքը, աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, փորձաքննությունը, կառուցվածքը և ծավալը:

Հետազոտության գիտական ապարատի բաղադրատարրերը փոխհամաձայնեցված, փոխպայմանավորված և փոխկապված են:

Ատենախոսության առաջին՝ «Հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման հիմնախնդրի հետազոտման տեսական մեթոդաբանական հիմքերը» գլուխը կազմված է երեք ենթագլխից, որտեղ ներկայացված են «արժեք» հասկացության, տարբեր գիտություններում հեղինակների կողմից տրված, սահմանումները, մեկնաբանությունները, որոնք ատենախոսը համակարգում է և զուգահեռներ անցկացնելով ներկայացնում է ուշագրավ վերլուծություններ, սեփական մեկնաբանություններ: Ուսումնասիրությունների արդյունքում հետազոտողը ներկայացնում է այդ հասկացության մասին հինգ պատկերացումները և իրավացիորեն եզրակացնում, որ «արժեքը անձի և հասարակության փոխազդեցության հետևանք է», և այն կարելի է ներկայացնել որպես «անձի կայուն վերաբերմունք, որը կապված է անձնային իմաստի հետ և դրսևորվում է վարքում»: Այս գլխում քննարկվում են հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման հիմնական միտումները, տեղեկութային պատերազմը դիտարկելով հոգեբանական պատերազմի բաղադրիչ, ներկայացվում են հոգեբանական պատերազմի կառուցվածքն ու գործառնությունը: Ուսումնասիրված են հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման հիմնախնդրի հետազոտման տեսական մեթոդաբանական հիմքերը, ներկայացված են վերլուծություններ, արժեհամակարգը ձևավորող հիմնական բաղադրիչները:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը կրում է «Անձի արժեհամակարգի փոխակերպման առանձնահատկությունների հետազոտություն: Հետազոտության տվյալների բազան» խորագիրը, նվիրված է հոգեբանական ներգործություններով պայմանավորված անձի արժեհամակարգի փոխակերպման հետազոտության ուղղվածության հիմնավորմանը, հետազոտության մեթոդների համակազմի, ընտրանքի, հետազոտության փուլերի ներկայացմանը: Մանրամասն ներկայացված է հետազոտության ընտրանքը, նկարագրվում են հետազոտության հինգ մեթոդները, հիմնավորված է դրանց ընտրությունը և կիրառության անհրաժեշտությունը: Ուշագրավ են փորձագիտական գնահատականների մեթոդի կիրառմամբ ստացված տվյալների վերլուծությունները, տրվում են պարզաբանումներ, հիմնավորումներ փորձագետների տեսակետների շուրջ, ներկայացվում է նաև փորձագետի

ուղղակի խոսքը, որի վերաբերյալ ատենախոսն արտահայտում է իր գնահատողական վերաբերմունքը: Այս գլխում ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ տրվում է հարուստ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս բացահայտել սոցիալական ցանցերում կատարվող հրապարակումների հաճախականությունը, համացանցից օգտվելու ակտիվությունը կազմող գործոնների ցուցանիշները, կոնտենտ վերլուծության ենթարկված լրատվական կայքերի վարկանիշները, ներկայացված են տարբեր հասկացությունների զուգորդությունների քանակական վերլուծությունների արդյունքները, ուշագրավ և արժեքավոր են կենսաիմաստային կողմնորոշումների հարցարանի համեմատական տվյալների ներկայացումը, դրանց վերլուծությունները, հետազոտական խմբերում: Բացահայտված են հիմնական կորելյացիոն կապերն անձի արժեքների և անձնային առանձնահատկությունների միջև, ներկայացված են առավել նշանակալի կապերը յուրաքանչյուր խմբի համար: Նշենք, որ ատենախոսին հաջողվել է ստանալ օբյեկտիվ և արժանահավատ տեղեկատվություն, որոնք կարևոր են հիմնախնդրի ամբողջական ուսումնասիրության տեսանկյունից:

Երրորդ գլուխը, որը կրում է «Հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման առանձնահատկություններն՝ ըստ հետազոտական տվյալների մշակման արդյունքների» խորագիրը, նվիրված է ԶԼՄ-ներում ներկայացված տեղեկույթի առանձնահատկությունների, ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությանը, ներկայացվում են հայկական և ադրբեջանական մամուլում տեղ գտած հոդվածների սենտիմենտային վերլուծությունը, հիմնված կոնոտացիայի վրա, կան ուշագրավ փաստեր և տեղեկույթ Ապրիլյան քառօրյա պատերազմի շրջանում լրատվական դաշտում ընթացող հակամարտության, տեղեկատվական պատերազմի մասին:

Նշանակալի ներդրում կարելի է համարել համահարաբերակցային վերլուծության արդյունքների ներկայացումը. կորելյացիոն /դրական, բացասական/ կապերի բացահայումը, որոնց հիման վրա ատենախոսության հեղինակը ձևակերպել է պատերազմի պայմաններում տեղեկույթի ազդեցության կառավարմանն ուղղված մեթոդական հանձնարարականներ՝ ուղղված հոգեբաններին և սոցիոլոգներին, քաղաքագետներին, կրթության, մեդիա ոլորտի մասնագետներին:

Ատենախոսության եզրակացությունները հիմնավորված են և համապատասխանում են առաջադրված խնդիրներին:

Նանե Արտակի Զեյնալյանի «Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում» խորագրով

թեկնածուական ատենախոսությունը կուռ, համապարփակ, գիտահետազոտական աշխատանք է, որը նպաստում հոգեբանական մի շարք արդիական խնդիրների լուծմանը, հոգեբանության գիտության զարգացմանը:

Ատենախոսության վերաբերյալ նշենք մի քանի նկատառումներ.

1. Կարծում ենք հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման հիմնախնդրի հետազոտման տեսական-մեթոդաբանական հիմքերը կարելի էր փոքր-ինչ ընդարձակ ներկայացնել:
2. Աշխատանքում կարելի էր առավել մանրամասն անդրադառնալ տեղեկույթի միջոցով արտակարգ իրավիճակների կառավարման հարցերին, որոշ մեթոդիկաներին:
3. Ատենախոսության գլուխները կարելի էր ավարտել ամփոփումներով:

Նշված նկատառումները չեն ստվերում կատարված գիտահետազոտական աշխատանքը, այն արժեքավոր ներդրում է հոգեբանության գիտության ոլորտում: Կատարված ուսումնասիրությունները կարող են օգտագործվել անձի տեսությունների, ներազդեցության հոգեբանության, հաղորդակցության տեսությունների գիտակարգերում, նպաստել անձի արժեհամակարգի ձևավորման մոտեցումների, էքզիստենցիալ ճգնաժամերի հաղթահարման ուղիների մշակմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նանե Արտակի Զեյնալյանի «Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում» խորագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2020 թվականի օգոստոսի ------- Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի թիվ 10 նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ Կ. Սահակյանը, մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա. Կիրակոսյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյանը, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Թադևոսյանը, հոգեբ. գիտ. թեկնածու Մ. Բեյբությանը, մանկ. գիտ. թեկնածու Հերմինե Ֆարզադյանը, մանկ. գիտ. թեկնածու

Հռիփսիմե Ֆարզադյանը, դասախոսներ Ա. Հակոբյանը, Ա. Տոնոյանը, Օ. Պողոսյանը, Ք. Հովակիմյանը, Ա.Պապոյանը, Լ. Բաղդասարյանը, Ա. Սիմոնյանը:

Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի ԺՊ,
հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ Կ. Սահակյան

Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի ԺՊ Կ. Սահակյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար Կ. Պետրոսյան